ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 2404-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- ---------- 2021 թվականի N -------Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 2404-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 37-րդ հոդվածի 1-ին մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքները կառուցապատելու կանոնակարգման միջոցառումների մասին» N 2404-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման 3-րդ կետից հետո ավելացնել 3.1.-րդ կետը՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Համաձայնեցման նպատակով համայնքի ղեկավարի կողմից լիազոր մարմնին ներկայացվող փաթեթում ներառվում են.

ա) հողամասի տեղադիրքը գլխավոր հատակագծի հիմնական գծագրի վրա՝ 1:10000 կամ 1:5000 մասշտաբով,

բ) իրավիճակային հատակագիծը՝ 1:500 կամ 1:1000 մասշտաբով, նշելով

հողամասը, հարևան հողօգտագործումները, գոյություն ունեցող և նախատեսվող շենքերը և շինությունները, դրանց բնույթը, շենքերի, շինությունների միջև հեռավորությունները, հողամասից 70 մ շառավղով միջպետական, հանրապետական, տեղական նշանակության ճանապարհները, ինժեներական ենթակառուցվածքի գծային և կետային օբյեկտները,

գ) տեղեկանք Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին առնչություն ունենալու և հողամասին առնչվող այլ սահմանափակումների մասին,

դ) համայնքի ղեկավարի տեղեկանք-հիմնավորումը՝ համայնքի համար նախատեսվող օբյեկտի կարևորության, գլխավոր հատակագծով նախատեսված հեռանկարային զարգացման համապատասխան գոտիների սահմաններում համարժեք հողամասի տրամադրման անհնարինության պատճառների և առաջարկվող փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ,

ե) օբյեկտի նախագծման ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը: »:

2) Որոշման 4-րդ կետի «բ» ենթակետից հետո ավելացնել «գ» ենթակետը՝ հետևյալ բովանդակությամբ.

«գ) բնակավայրերում՝ կառուցապատման գծով, դրանց բացակայության դեպքում՝ առաջնորդվելով սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներով: »

3) որոշման 8-րդ կետի 1-ին պարբերության «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի հետ» և «Երևանի քաղաքապետի հետ:» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի հետ» և «Երևանի քաղաքապետարանի հետ:» բառերով, իսկ 2-րդ պարբերության «Օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինական գործունեության իրականացման գործառույթները

նախապես համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ու պետական կառավարման շահագրգիռ այլ մարմինների հետ:» բառերը փոխարինել «Օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինական գործունեության իրականացման գործառույթները նախապես համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարության, քաղաքաշինական տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ու պետական կառավարման շահագրգիռ այլ մարմինների հետ:» բառերով:

4) Ուժը կորցրած ճանաչել որոշման 10-րդ կետը